ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

01 ապրիլի 2024 թվական գ. Մարմաշեն

2024 թվականի ապրիլի 01-ին Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրում տեղի ունեցավ հանրային լսումներ՝ Ախուրյան համայքնում իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ: Բաց լսումները վարում էր Ախուրյան համայնքի ղեկավար ՝ Զավեն Մանուկյանը, առաջին տեղակալ ՝ Կարեն Ներսիսյանը , ներկա էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Սերգոյանը , զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ՝ Գնել Մանուկյանը, Մարմաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Տիգրան Տիգրանյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամները և բնակիչներ:

1. Պարոն Մանուկյանը առաջարկեց 2025 թվականին Մարմաշեն բնակավայրի համար իրականացնել գլխավոր մայրուղին գյուղին միացնող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Բնակիչները առաջարկին հավանություն տվեցին ,սակայն նշեցին որ գյուղը ունի չլուծված շատ առաջնային այլ հարցեր նույնպես:

2. Բնակիչներից՝ Մանվել Պապոյանը, դիմեց խմելու ջրի ամբողջ ցանցի վերանորոգման հարցով, նշելով , որ գյուղում շատ տներ չունեն խմելու ջուր :

Պարոն Մանուկյանը պատասխանեց, որ 2024 թվականին նախատեսված է ազբեստյա խողովակների մի մասը փոխարինել մետաղյա խողովակներով , իսկ մյուս մասի համար պետք է դիմեն « Վեոլիա ջուր » ընկերությանը :

3. Բնակիչներից ՝ Իշխան Հարությունյանը առաջարկեց Մարմաշեն արվեստի դպրոցը անվանակոչել մշակույթի վաստակավոր գործիչ ՝ Մուրադ Մալխասյանի անվամբ , քանի որ նա ծնվել ու մեծացել է Մարմաշեն գյուղում և հանդիսանում էր գյուղի բնակիչ: Եվ բնակիչների համար մեծ պատիվ կլիներ նրա անունով արվեստի դպրոց ունենալ , քանի որ Մուրադ Մալխասյանը բոլորի կողմից սիրված և հարգանք վայելող արվեստագետ է :

Առաջարկությունը բնակիչների կողմից ընդունվեց միաձայն և Պարոն Մանուկյանը ասաց,որ ինքն էլ է կողմ , և բացարձակ առարկություն չունի:

4. Բնակիչներից ՝ Արմենակ Մալխասյանը հարց բարձրացրեց իր վարձակալական հողի բարձր վարձավճարի վերաբերյալ, նշելով , որ վարելահողը անջրդի է և ինքը չի կարողանում հողը մշակել:

Պարոն Ներսիսյանը ասաց , որ այն հողերը , որոնք չունեն պայմանագիր նորից կչափագրվեն, կորոշվի նոր գին և բնակչի հետ կկազմվի պայմանագիր :

5. Բնակիչներից ՝ Գարիկ Համբարյանը տեղեկացրեց , որ Մարմաշեն բնակավայրի որոշ հասցեներ գազաֆիկացված չեն և այդ հարցով դիմել են :

Պարոն Մանուկյանը հավաստիացրեց ,որ խնդրի վերաբերյալ տեղյակ է և գործընթացը ընթացքի մեջ է :

Հանրային լսման ավարտին ներկայացված խնդրներից բնակիչները առաջնահերթությունը տվեցին գլխավոր մայրուղին գյուղին միացնող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների կատարմանը :

Հանրային լսումները կազմակերպող՝ Տ.Տիգրանյան

Արձանագրող՝ Ն. Սեդրակյան

ՑՈՒՑԱԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

01.04.2024

h/h	Անուն, ազգանուն	Էլ. փոստ	Հեռախոս	Ստորագրություն
1	Մարգարյան Արմեն Հակ.		094 483815	
2	Հովհաննիսյան Էդգարիկ		093030320	
3	Սարգսյան Գագիկ		093 678415	
4	Համբարձումյան Գայանե		077 839422	
5	Սրբազանի Գրիգոր		098250575	
6	Եսայանի Դավիթ		098543761	
7				
8	Հովհաննիսյան Արտյոմ			
9	Գևորգյան Գևորգ		093-40-3756	
10	Դավթյան Գեղարքունի		093-24-80 88	
11	Հարությունյան Գայանե		093-41-86-88	
12	Յոլչյան Ավետիս		098-66-7342	
13	Հովսեփյան Հասմիկ		094-71-67-07	
14	Դոլոյան Արմենուհի		093-73-91-49	
15	Թադևոսյան Համլետ		093-809821 2	
16	Գրիգորյան Դավիթ		093 88 40 67	
17.	Ներսիսյան Արթուր			
18	Մարտիրոսյան Ալեքսան		091 98 74 11	